ԱՄՓՈՓՈՒՄ

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի հանրային քննարկման և Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. Միջոցառումների ծրագրով 2019 թվականին կատարված աշխատանքների հանրային մշտադիտարկման արդյունքների ներկայացման աշխատաժողովի

2020 թվականի փետրվարի 12-ին Երևանում անցկացվեց «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի հանրային քննարկմանը և Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրով 2019 թվականին կատարված աշխատանքների հանրային մշտադիտարկման արդյունքների ամփոփմանը նվիրված աշխատաժողովը:

Աշխատաժողովը կազմակերպվել էր Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից՝ «ԻՀԱ-ն հանուն արդիականացման» ծրագրի շրջանակներում:

Աշխատաժողովի անցկացումը նպատակ էր հետապնդում՝

- Քննարկելու «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծը և ներկայացնելու հստակ առաջարկություններ դրա բարելավման համար:
- Ամփոփելու Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրով (այսուհետ՝ Ռազմավարություն) 2019 թվականին կատարված աշխատանքների արդյունքները և ներկայացնելու հանրային մշտադիտարկման արդյունքները:

Աշխատաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ գործադիր, դատական և իրավապահ համակարգի մարմիններից, քաղաքացիական հասարակության կազմակերպություններից, փորձագիտական հանրույթից, փաստաբանական համայնքից և ԶԼՄ-ներից:

Աշխատաժողովին բացման խոսքով հանդես եկան «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի (այսուհետ՝ Կոալիցիա) քարտուղարության համակարգող Կարեն Զաղոյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանը, Կոալիցիայի կառավարման խորհրդի նախագահ Արփինե Հակոբյանը:

Բացման խոսքում Կարեն Զաղոյանը նշեց, որ ԻՀԱ-ն և Կոալիցիան տարիներ շարունակ կանգնած են եղել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման ակունքներում և շարունակելու են իրենց փորձագիտական ջատագովման աշխատանքները հակակոռուպցիոն

ոլորտի հանրային քաղաքականությունների մշակման և բարելավման, ներառյալ ինստիտուցիոնալ մարմինների ձևավորման գործում: Խոսելով հակակոռուպցիոն կոմիտեի նախագծի մասին, Կ. Զադոյանը իր խոսքում ընդգծեց, որ ԻՀԱ-ն և Կոալիցիան հետևողական են լինելու, որ նոր ստեղծվող հակակոռուպցիոն քննչական մարմինն ամբողջապես կատարի իր լիազորությունները, հավատարիմ մնա իր առաքելությանը և վերադարձնի հասարակությունից գողացված ակտիվները:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանն իր խոսքում կարևորեց նման միջոցառումների կազմակերպումը, շնորհակալություն հայտնեց կառուցողական երկխոսության, ինչպես նաև հակակոռուպցիոն ոլորտում նախարարության նախաձեռնությունների վերաբերյալ մշտապես մասնագիտական կարծիք տրամադրելու համար: Այնուհետև հավելեց, որ Կոալիցիայի հայացքները համընկնում են կառավարության ծրագրի և ռազմավարությամբ որդեգրված ուղղությունների հետ, մասնավորապես՝ կառավարության քաղաքական կամքի հետ: Եվ այդ առնչությամբ Հայաստանը պետք է զերծ լինի կոռուպցիոն դրսևորումներից, ցուցաբերի զրո հանդուրժողականություն կոռուպցիայի հանդեպ:

Կոալիցիայի կառավարման խորհրդի նախագահ Արփինե Հակոբյանը իր խոսքում նշեց, որ քաղաքացիական հասարակությունը, ի դեմս Կոալիցիայի, իր անշրջելի ներդրումն է ունեցել հակակոռուպցիոն մեխանիզմների մշակման գործընթացում և պատրաստակամ է շարունակել իր կարևոր դերակատարումը այդ մեխանիզմների իրականացման գործընթացում, ինչը չի բացառելու նաև գործընթացի մշտադիտարկման կարևոր հանձնառության ստանձնումը: Վստահորեն, Կոալիցիան կիսելու է նաև համատեղ գործունեության արգասիքների պատասխանատվությունը՝ անկախ վերջինների դրական կամ բացասական բնույթից, և սա է մասնակցային գործընթացների գրավչությունը:

Աշխատաժողովի օրակարգում ներառված **առաջին թեմատիկ քննարկման** ընթացքում Ս. Գալյանը ներկայացրեց ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված և հանրային քննարկման ներկայացված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքների նախագծերի փաթեթը,(այսուհետ՝ Նախագիծ) դրանց կարգավորման հիմնական առարկան: Մասնավորապես, փոխնախարարը իր խոսքում անդրադարձավ կոռուպցիոն բնույթի հանցագործությունները քննող մասնագիտացված մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ստեղծման նպատակներին, Նախագծով այդ մարմնին տրվող անկախության երաշխիքներին, գործառույթների շրջանակին, և ռազմավարության կատարման գործընթացներին:

Թեմատիկ քննարկման հաջորդ բանախոսը՝ Կարեն Զաղոյան, իր խոսքում կարևորեց սպասվող սահմանադրական բարեփոխումների համատեքստում հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմնին սահմանադրական անկախության երաշխիքներ տալու հարցի դիտարկումը: Սպառված չհամարելով մեկ միասնական հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմնի մոդելին վերադառնալու շուրջ հանրային դիսկուսի ծավալումը՝ նա նշեց, որ սահմանադրական բարեփոխումների համատեքստում այդ հարցը նույնպես պետք է քննարկման առարկա դարձնել: Հաջորդիվ, զեկուցողն իր խոսքում անդրադարձավ օրենքներով հակակոռուպցիոն մարմինների գործունեության նկատմամբ պատշաճ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմներ սահմանելու կարևորության մասին՝ առաջարկելով՝ և՛ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, և՛ Կոմիտեի կազմում ստեղծել մասնագիտացված քաղաքացիական հասարակության կառույցներից բաղկացած խորհուրդներ: Բանախոսը անդրադարձ կատարեց նաև Նախագծով նախատեսված մի շարք այլ խնդրահարույց կարգավորումների:

Թեմատիկ քննարկման բանախոսների ելույթներին հաջորդեց հարցուպատասխանի մասը, որտեղ բարձրացված հարցերն ու մտահոգությունները առնչվում էին *նախատեսված սահմանադրական բարեփոխումների համատեքստում Կոմիտեի սահմանադրաիրավական կարգավիճակ տալուն, Նախագծով Կոմիտեի ինստիտուցիոնալ անկախության ապահովման խնդրահարույց դրույթներին, այդ թվում՝ Կոմիտեի նախագահին նշանակելու և ազատելու ընթացակարգերին, հակակոռուպցիոն դատարանների ստեղծմանը, Կոմիտեի քննիչների կողմից մասնագիտական սխալի ապահովագրության ինստիտուտի ներդրմանը, Կոմիտեի նախագահի ընտրության համար ձևավորվող մրցութային հանձնաժողովի կազմում միջազգային փորձագետների ներգրավման ընթացակարգին և նրանց ունեցած դերակատարմանը, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների սպառիչ ցանկի սահմանմանը, դրանց սուբյեկտային կազմի հստակ տարանջատմանը, այդպիսի հանցագործությունների քննության քննչական ենթակայությանը վերաբերող հարցերին:*

Երկրորդ թեմատիկ քննարկման ընթացքում ելույթներով հանդես եկան ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ Մարիամ Գալստյանը և ԻՀԱ-ի ՔՀԿ-ների զարգացման ծրագրի համակարգող/իրավաբան, Կոալիցիայի հակակոռուպցիոն փորձագետ Արտյոմ Մեսրոպյանը, ովքեր ներկայացրեցին Ռազմավարության 2019 թվականին կատարված աշխատանքները և հանրային մշտադիտարկման արդյունքները:

Մարիամ Գալստյանն իր խոսքում նշեց, որ որպես Ռազմավարության իրականացման նկատմամբ մոնիթորինգ իրականացնող մարմին, ՀՀ արդարադատության նախարարությունը

վերլուծել է իրավիճակը և պայմանականորեն միջոցառումների կատարումը դասակարգել ամբողջությամբ **կատարված, մասնակի կատարված և չկատարված**:[1] Ըստ այդմ.

2019 թվականի համար նախատեսված՝

- **22 միջոցառումներից ամբողջությամբ կատարվել են 10 միջոցառումներ կամ 45,4%-ը,**
- **մասնակի են կատարվել 12 միջոցառում կամ 54.6%-ը,**
- **չկատարված միջոցառում առկա չէ:**

Մասնակի կատարված միջոցառումների վերաբերյալ Մ. Գալստյանը նշեց, որ դրանց մասով նախատեսված են եղել միջազգային փորձի ուսումնասիրություններ, վերլուծություններ, որոնց արդյունքներով էլ մշակվել են առաջարկությունների փաթեթներ, բայց քանի որ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում դրանք չեն քննարկել, իրենք այդ միջոցառումները համարել են մասնակի կատարված: Այնուհետև ներկայացրել է Ռազմավարության առանձին ուղղություններով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը:

Նախքան հանրային մշտադիտարկման արդյունքները ներկայացնելը, Ա. Մեսրոպյանը անդրադարձ կատարեց մշտադիտարկման իրականացման մեթոդաբանությանը, նշելով, որ մշտադիտարկման արդյունքները մշակվել են բացառապես հիմք ընդունելով **միջոցառումների կատարման համար պատասխանատու պետական մարմիններից ստացված տեղեկատվությունը՝ դրանք համադրելով ինչպես միմյանց, այնպես էլ Ռազմավարության միջոցառումների ծրագրի հետ:** Բացի այդ, արդյունքների արձանագրման ժամանակ հաշվի են առնվել հետևյալ հանգամանքները.

1) Ռազմավարության միջոցառումների ծրագրով կոնկրետ միջոցառման կատարման վերջնաժամկետների պահպանումը,
2) կոնկրետ միջոցառումների ուղղությամբ ակնկալվող արդյունքները,
3) վերստուգիչ ցուցանիշներին հասնելու միջոցները:

Իր խոսքում Ա. Մեսրոպյանը մանրամասն ներկայացրեց հանրային մշտադիտարկման արդյունքների քանակական տվյալները: Ըստ այդմ, 2019 թվականի ընթացքում Ռազմավարության միջոցառումների ծրագրի **48 միջոցառումներից թվով 31 միջոցառման ուղղությամբ** նախատեսված է եղել որոշակի աշխատանքների իրականացում: Դրանցից՝

---

[1] ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման 2019 թվականին կատարման ենթակա միջոցառումների իրագործման ընթացքի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության հաշվետվությանը կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ http://moj.am/legal/view/article/1277/

- **ամբողջությամբ իրականացվել է թվով 9 միջոցառումներ**: Դրանք են՝ 1-ին, 2-րդ. 3-րդ, 4-րդ, 32-րդ, 39-րդ,, 45-րդ, 47-րդ և 48-րդ միջոցառումները,
- մասնակից **իրականացված կարելի է համարել թվով 8 միջոցառում**: Դրանք են՝ 6-րդ, 9-րդ 10-րդ, 17-րդ, 19-րդ, 22-րդ, 27-րդ և 28-րդ միջոցառումները,
- **Չի իրականացվել թվով 6 միջոցառում:** Դրանք են՝ 12-րդ, 14-րդ, 42-րդ, 37-րդ, 43-րդ և 44-րդ միջոցառումները: Այս միջոցառումների կատարման համար պատասխանատու մարմիններն են եղել՝
    - **ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը՝** 12-րդ միջոցառում,
    - **ՀՀ արդարադատության նախարարությունը՝** 42-րդ միջոցառում,
    - **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝** 14-րդ միջոցառում
    - **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարություն՝** 43 և 44-րդ միջոցառում:
    - **ՀՀ կենտրոնական բանկ** ՝ 37-րդ միջոցառում:
- **Թվով 8 միջոցառումների ուղղությամբ 2019 թվականի համար սկսված աշխատանքները կշարունակվեն նաև 2020 թվականի ընթացքում:** Դրանք են՝ 20-րդ, 26-րդ, 34-րդ, 35-րդ, 38-րդ, 40-րդ, 41-րդ, 46-րդ միջոցառումները: Ընդ որում, նշված միջոցառումների ուղղությամբ 2019 թվականի ընթացքում որոշակի աշխատանքներ չեն իրականացվել **միայն 20-րդ** միջոցառման ուղղությամբ:
- **17-րդ և 19-րդ, միջոցառումների մասով որպես միջոցառման վերստուգիչ ցուցանիշ**, նախատեսված է եղել, որ այդ միջոցառումների ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքները, ներառյալ **միջազգային փորձի ուսումնասիրությունը և ներկայացված առաջարկությունները պետք է քննարկվեին Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում, ինչը չի իրականացվել:**
- Ռազմավարության միջոցառումների ծրագրով **թվով 9 միջոցառումների** ուղղությամբ, դրանք են՝ 3-րդը, 9-րդը, 14-րդը, 17-րդը, 20-րդը, 22-րդը, 32-րդը, 37-րդը, 40-րդը, 2019 թվականի ընթացքում նախատեսված է եղել **իրականացնել միջազգային փորձի ուսումնասիրություն**: Համապատասխան մարմիններին ուղղված հարցումների արդյունքում ՀՀ արդարադատության նախարարությունը **3-րդ, 17-րդ, 20-րդ, 32-րդ, 40-րդ** միջոցառումներով, որպես միջոցառման կատարման համար հիմնական պատասխանատու մարմին, իսկ **9-րդ և 22-րդ** միջոցառումներով որպես համակատարող պետական մարմին, ներկայացրել է միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներ: Նախարարությունը **19-րդ միջոցառման մասով**

(նվերների ռեեստր) լրացուցիչ է ներկայացրել միջազգային փորձի ուսումնասիրությունը: ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը ներկայացրել է **22-րդ** միջոցառմամբ սահմանված միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները: Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներ չեն ներկայացրել՝

- **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝** 14-րդ միջոցառման մասով,
- **Կենտրոնական բանկը՝** 37-րդ միջոցառման մասով:

Այնուհետև, Մարիամ Գալստյանը ներկայացրեց ընդհանուր դիրքորոշում Ռազմավարության հանրային մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ, նշելով, որ **նախ՝** շեղումները հիմնականում պայմանավորված են պետական մարմիններից ստացված տեղեկատվության ծավալով, որոնք նաև ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացվել, **երկրորդ՝** դրանք պայմանավորված են նաև այն հանգամանքով, որ մի շարք ուղղություններով ոչ թե առանձին առաջարկությունների փաթեթներ են մշակվել, այլև կոնկրետ նախագծեր, որոնց հիմնավորումներում արտացոլված են միջազգային փորձի արդյունքները: Դրանից հետո, մասնակիցները ևս արձագանքելու և հարցեր տալու հնարավորություն ունեցան:

Տեղեկացնենք, որ աշխատաժողովի անցկացումից անմիջապես հետո Կոալիցիան և ԻՀԱ-ն ամփոփել են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ աշխատաժողովի ժամանակ հնչեցված առաջարկությունները, որոնք սույն թվականի փետրվարի 14-ին տեղադրվել են իրավական ակտերի հրապարակման միասնական www.e-draft.am կայքէջում և ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարություն:

Հայտնում ենք, որ Կոալիցիայի կողմից իրականացված հանրային մշտադիտարկման արդյունքների ամփոփված տվյալները, ներառյալ՝ որակականը, ՀՀ արդարադատության նախարարություն կներկայացվեն կիսամյակային ամփոփման կտրվածքով:

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա

Իրավաբանների հայկական ասոցիացիա